ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հոկտեմբերի 2024 թվականի N 1712-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի N 245-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 23-ի «Դատապարտյալի անձնական հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ հիգիենայի պարագաների չափաբաժինները, հանդերձանքի, անկողնային պարագաների չափաբաժինները և դրանց օգտագործման ժամկետները, սննդամթերքի միջին և մեկը մյուսով փոխարինելու չափաբաժինները սահմանելու մասին» N 245-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածի աղյուսակի «Հանդերձանք» վերտառությամբ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

	Հանդերձանք			
1.	Տղամարդու կիսաբամբակյա երկարաթև պոլո շապիկ	հատ	2	1 տարի
2.	Տղամարդու կիսաբամբակյա կարճաթև պոլո շապիկ	հատ	2	1 տարի
3.	Տղամարդու տաբատ՝ սարժայից	հատ	2	1 տարի

4.	Տղամարդու սլիփոն կոշիկ՝ կտորից	զույգ	1	1 տարի
5.	Տղամարդու կաշվե ձմեռային կոշիկ	զույգ	1	2 տարի
6.	Տղամարդու ձմեռային ձեռնոց	զույգ	1	2 տարի
7.	Տղամարդու կեպի՝ կտորից	հատ	1	1 տարի
8.	Տղամարդու բաճկոն սարժայից՝ թաքնված գլխանոցով	հատ	1	2 տարի
9.	Տղամարդու բամբակյա կամ կիսաբամբակյա ներքնազգեստ շապիկ	հատ	6	1 տարի
10.	Տղամարդու բամբակյա կամ կիսաբամբակյա ներքնազգեստ վարտիք	հատ	6	1 տարի
11.	Տղամարդու բամբակյա կամ կիսաբամբակյա գուլպա	զույգ	6	1 տարի
12.	Կանացի կիսաբամբակյա երկարաթև պոլո շապիկ	հատ	2	1 տարի
13.	Կանացի կիսաբամբակյա կարճաթև պոլո շապիկ	հատ	2	1 տարի
14.	Կանացի տաբատ՝ սարժայից	հատ	2	1 տարի
15.	Կանացի սլիփոն կոշիկ՝ կտորից	զույգ	1	1 տարի
16.	Կանացի կաշվե ձմեռային կոշիկ՝ առանց կրունկ	զույգ	1	2 տարի
17.	Կանացի ձմեռային ձեռնոց	զույգ	1	2 տարի
18.	Կանացի կեպի՝ կտորից	հատ	1	1 տարի
19.	Կանացի բաճկոն սարժայից՝ թաքնված գլխանոցով	հատ	1	2 տարի
20.	Կնոջ շապիկ	հատ	4	1 տարի
21.	Կրծկալ, ներքնազգեստ	հատ	4	1 տարի
22.	Կնոջ բամբակյա կամ կիսաբամբակյա վարտիք	հատ	6	1 տարի
23.	Կնոջ բամբակյա կամ կիսաբամբակյա գուլպա	զույգ	3	1 տարի
24.	Կնոջ բամբակյա կամ կիսաբամբակյա զուգագուլպա	զույգ	4	1 տարի
25.	Հողաթափ կամ մաշիկ	զույգ	1	1 տարի
26.	Մանկական հագուստ՝ 1-3 տարեկան երեխաների առկայության դեպքում	լրակազմ	6	1 տարի

».

2) որոշման N 1 հավելվածի աղյուսակի «Հիգիենիկ պարագաներ» վերտառությամբ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

	Հիգիենիկ պարագաներ			
1.	Հիգիենիկ փաթեթ հետևյալ պարագաներից՝	հավաքածու	1	շաբաթական
1.1.	Օճառ՝ ձեռքի	գրամ	40	շաբաթական
1.2.	Լոգանքի գել	միլիլիտր	20	շաբաթական
1.3.	Շամպուն	միլիլիտր	20	շաբաթական

1.4.	Մեկանգամյա օգտագործման երկսայրանի ածելի	հատ	1	շաբաթական
1.5.	Սափրվելու մածուկ	միլիլիտր	10	շաբաթական
1.6.	Ատամի մածուկ	միլիլիտր	6	շաբաթական
1.7.	Ատամի խոզանակ	հատ	1	շաբաթական
1.8.	Զուգարանի թուղթ	հատ	1	շաբաթական
2.	Լվացքի փոշի (1 կգ լվացքի հաշվարկով)	գրամ	100	ամսական
3.	Կանացի հիգիենայի միջոցներ	հատ	10	ամսական

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

31.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ